

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

Օրենսդրական նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հաշտարարության ինստիտուտի բարեփոխումների ամբողջականացման անհրաժեշտությամբ:

2022 թվականին «Հաշտարարության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) փոփոխություններով վերացվեցին հաշտարարության իրականացման համար խոչընդոտ հանդիսացող իրավակարգավորումները: Նախատեսվեցին կարգավորումներ՝ ուղղված առցանց հաշտարարության իրականացմանը, պարտադիր հաշտարարության ներդրմանը, հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացմանը: Սակայն իրավակիրառ պրակտիկայի վերլուծության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ հաշտարարության ինստիտուտի արդյունավետ գործունեության ապահովման նպատակով անհրաժեշտ է մշակել և իրականացնել շարունակական օրենսդրական բարեփոխումներ:

Մասնավորապես, ներկայումս գործող օրենսդրությամբ սահմանված չէ համահաշտարարության հասկացությունը, սահմանված չեն հաշտարարությունը խթանող գործիքակազմեր, այդ թվում՝ Արդարադատության նախարարության կողմից հաշտարարի նշանակման դեպքում հաշտարարական հաստատություն նշանակելու հնարավորություն, օրենսդրորեն սահմանված չէ օտարերկրյա անձանց մասնակցությամբ հաշտության համաձայնությունները Հայաստանի Հանրապետությունում հաստատելու հնարավորություն և մի շարք նման հարցեր: Արդյունքում առկա է «Հաշտարարության մասին» օրենքում, ինչպես նաև Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու անհրաժեշտություն:

Նախատեսվող օրենսդրական փոփոխությունները անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետությունում հաշտարարության ինստիտուտի կայացման և զարգացման, ինչպես նաև դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման համար: Այս առումով կարևոր է նշել, որ 2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 1133-Լ Կառավարության որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության Հավելված 1-ով հաստատված «Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում» վերնագրված ռազմավարական նպատակի շրջանակներում ևս կարևորվել է հաշտարարության ինստիտուտի զարգացման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում:

Հարկ է նաև նշել, որ Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման Հավելված 1-ում անդրադառնալով «Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում» թիվ 8-րդ նպատակի հիմնավորմանը, նշվել է, որ առաջարկվող միջոցառումները պայմանավորված են դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման, գործերի քննության ժամկետների կրճատման, ինչպես նաև վեճի՝ կողմերի համար վեճերի առավել ճկուն և միաժամանակ մատչելի և արդյունավետ եղանակով լուծման մեխանիզմներ նախատեսելու անհրաժեշտությամբ: Իր հերթին, նշված խնդիրների լուծման արդյունքում, ակնկալվում է, որ անհրաժեշտություն կառաջանա կատարելագործել հաշտարարության կիրառման խթանները և առավել ճկուն մեխանիզմներ և ընթացակարգեր նախատեսել:

Նախագծով առաջարկվում է փոփոխություններ կատարել «Հաշտարարության մասին» օրենքում՝ նախատեսելով համահաշտարարության սահմանումը և առանձնահատկությունները, Արդարադատության նախարարության կողմից հաշտարար նշանակելու դեպքում հաշտարարական հաստատություն նշանակելու հնարավորությունը, օտարերկրյա անձանց մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության արտոնագրված հաշտարարի կողմից հաստատված հաշտության համաձայնությունները Հայաստանի Հանրապետությունում հաստատելու ընթացակարգը, ինչպես նաև հաշտարարության ոլորտի հարաբերությունների զարգացմանն ուղղված այլ իրավակարգավորումներ:

Հիմք ընդունելով վերոնշյալ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը՝ ««Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծերի մշակման նպատակն է հաշտարարության ինստիտուտի՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային եղանակի, բարեփոխումը և զարգացումը:

1.1. «Համահաշտարարություն» եզրույթի սահմանում

Ներկայումս Օրենքում առկա չեն համահաշտարարության վերաբերյալ իրավակարգավորումներ: Այնինչ, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունից կարող ենք եզրակացնել, որ համահաշտարարություն իրականացնելու հնարավորությունը որոշ դեպքերում թույլ է տալիս գործընթացը կազմակերպել առավել արդյունավետ և թիրախային՝ հատկապես այն դեպքերում, երբ բարդ գործերով հաշտարարություն է իրականացվում և անհրաժեշտ է միավորել հաշտարարության տարբեր ոճեր, գործիքակազմ և հմտություններ: Համահաշտարարությունը, ըստ էության, մեկից ավելի հաշտարարների ներգրավմամբ հաշտարարություն իրականացնելն է:

Օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հաշտարարության վերաբերյալ համաձայնությամբ մշտապես գործող հաշտարարական հաստատություն ընտրված լինելու դեպքում հաշտարարությունն իրականացնում է այդ հաստատության նշանակած անձը կամ անձինք: Ստացվում է, որ օրենքով նախատեսվում է համահաշտարարություն իրականացնելու հնարավորություն, սակայն համահաշտարարության իրականացման կարգը, պայմանները, հաշտարարների վարձատրությունը և նման ի շարք հարցեր կարգավորված չեն:

Այսպես, ավանդաբար հաշտարարությունն իրականացվում է մեկ հաշտարարի ներգրավմամբ, սակայն որոշ դեպքերում կախված գործի բնույթից և առանձնահատկություններից կողմերի համար կարող է նախընտրելի լինել մեկից ավելի հաշտարարների ներգրավմամբ վեճը լուծելը: Հիմնավոր դիտարկելով վկայակոչված փաստարկը՝ որոշ միջազգային փաստաթղթերում անդրադարձ է կատարվում համահաշտարարությանը: Որպես օրինակ հարկ է վկայակոչել Արդարադատության

արդյունավետության եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունված «Հաշտարարությանն առնչվող օրինաստեղծ գործունեության եվրոպական ձեռնարկը» (այսուհետ նաև՝ Ձեռնարկ)¹: Ձեռնարկը ամփոփ ներկայացնում է եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից կիրառվող լավագույն փորձը և ցույց է տալիս, թե ինչպես կարող են գործնականում կիրառվել միջազգային հաշտության համաձայնությունների, ուղեցույցների և այլ փաստաթղթերի դրույթները:

Վկայակոչված փաստաթղթի «Հաշտարարի նշանակումը» վերտառությամբ 5.1.1. կետում նշվում է, որ, որպես կանոն, կողմերը կարող են ազատորեն ընտրել հաշտարար կամ համահաշտարարներ կախված իրենց նախընտրությունից, ինչը սահմանված է մի շարք երկրների, այդ թվում՝ Բելգիայի, Խորվաթիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Լիտվայի, Լեհաստանի, Սերբիայի և այլ երկրների օրենսդրությամբ²: Հետևաբար, հաշվի առնելով խռաջատար փորձը՝ 5.1.1. կետում առաջարկվում է օրենսդրությունը մշակելիս հնարավորություն տալ կողմերին նման նախընտրության դեպքում նշանակել մի քանի հաշտարարներ, որոնք հանդես կգան որպես համահաշտարարներ³:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ, հիմնվելով նաև լավագույն միջազգային փորձի վրա, Օրենքի նախագծով առաջարկվում է նախատեսել համահաշտարարության իրականացման վերաբերյալ իրավակարգավորումներ՝ հնարավորություն վերապահելով կողմերին ցանկության դեպքում իրականացնել համահաշտարարություն:

1.2. Այլ հարցերի կարգավորման անհրաժեշտություն

Ներկայումս Օրենքով հստակ նախատեսված չէ Արդարադատության նախարարության կողմից հաշտարարի նշանակման դեպքում հաշտարարական հաստատություն նշանակելու հնարավորությունը, ինչը կարևոր նշանակություն ունի հաշտարարության ոլորտի ինստիտուցիոնալ զարգացման համատեքստում, ինչպես նաև առցանց հաշտարարության իրականացման դեպքում սահմանված չէ հաշտության համաձայնությունը էլեկտրոնային եղանակով ստորագրելու հնարավորությունը:

¹ Տե՛ս European Handbook for Mediation Lawmaking, EUROPEAN COMMISSION FOR THE EFFICIENCY OF JUSTICE (CEPEJ) <https://rm.coe.int/cepej-2019-9-en-handbook/1680951928>, 31.07.2024թ. դրությամբ:

² Տե՛ս նույն տեղում, էջ 58:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 22:

Օրենքում բացակայում են նաև որոշակի իրավակարգավորումներ՝ կապված հաշտարարական հաստատությունների ներգրավմամբ հաշտարարություն իրականացնելու դեպքում առաջացող լրացուցիչ ծախսերի և դրանց բաշխման հետ: Օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է հաշտարարության իրականացման հետ կապված ծախսերը: Մասնավորապես նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշտարարության հետ կապված ծախսերը ներառում են՝ հաշտարարի վարձատրության գումարը, կողմերի համաձայնությամբ հաշտարարի կրած ծախսերը: Օրենքով կարգավորված չեն հաշտարարական հաստատության կողմից հաշտարարություն իրականացնելու դեպքում հաշտարարության ծախսերը, որոնք տարբերվում են հաշտարարի կողմից հաշտարարություն իրականացնելու ծախսերից, քանի որ հաշտարարական հաստատությունները գործում են վճարովի հիմունքներով և հաշտարարական գործընթացը կազմակերպելու համար կողմերից ստանում են վճարներ: Նախագծով առաջարկվել է այդպիսի ծախսերը նույնպես ներառել հաշտարարության հետ կապված ծախսերի ցանկում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածը սահմանում է, որ եթե հաշտարարության արդյունքով հաշտության համաձայնությունը կնքվել է արտադատական կարգով՝ արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ, ապա հաշտարարության յուրաքանչյուր կողմ իրավունք ունի հաշտության համաձայնությունը կնքելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում դիմելու իր բնակության վայրի ընդհանուր իրավասության դատարան՝ կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու պահանջով: Նշված ժամկետը գործնականում խնդրահարույց է հատկապես այն դեպքերում, երբ հաշտության համաձայնությունը ենթադրում է պարտավորությունների շարունակական կատարում, և կողմերից մեկը այդ ժամկետից հետո դադարում է հաշտության համաձայնության պահանջները կատարել: Նման դեպքում մյուս կողմը փաստացի զրկվում է հաշտության համաձայնության հիման վրա կատարողական թերթ ստանալու հնարավորությունից: Նախագծով առաջարկվել է նշված խնդիրը լուծելու նպատակով ժամկետը վեց ամսվա փոխարեն սահմանել մեկ տարի:

Միևնույն ժամանակ, գործնականում հաճախ են դեպքերը, երբ արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության

համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու պահանջով գործերի դեպքում նման դիմումները մերժվում են դիմումում առկա թերությունների՝ այդ թվում նաև տեխնիկական խնդիրների պատճառով: Արդյունքում կողմը զրկվում է դրանք ուղղելու և կրկին ներկայացնելու հնարավորությունից հաշվի առնելով, որ նույն գործով արդեն ստացել է դատարանի մերժումը: Գործնականում այս մոտեցումը հանգեցնում է մի շարք խնդիրների, որոնք պահանջում են օրենսդրական վերանայում:

Առաջին հերթին, դատական պրակտիկան վկայում է, որ նման մերժումները հաճախ պայմանավորված են ոչ թե բուն հաշտության համաձայնության բովանդակային թերություններով, այլ զուտ ընթացակարգային կամ տեխնիկական բնույթի թերություններով, ինչպես օրինակ՝ ձևաչափի խնդիրները, անհրաժեշտ կից փաստաթղթերի բացակայությունը կամ սխալ ձևակերպումները:

Ուսումնասիրության արդյունքում նման դեպքերը՝ հատկապես դատարան դիմելու իրավունքի սահմանափակման տեսանկյունից բացառելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում թույլատրել դատարաններին մատնանշել այն հիմքերը, որոնց համաձայն դիմումը կարող է մերժվել և հնարավորություն տալ կողմերին շտկել դիմումում առկա թերությունները: Միջազգային փորձը և արդի դատավարական համակարգերում ձևավորված պրակտիկան նույնպես ցույց են տալիս, որ նման իրավիճակներում առավել ճիշտ և իրավաչափ մոտեցում է կողմերին նախազգուշացնել թերությունների մասին և տալ ողջամիտ ժամկետ դրանք վերացնելու համար:

Ուստի՝ առաջանում է անհրաժեշտություն օրենսդրորեն ամրագրելու դատարանի իրավասությունը մատնանշել դիմումում առկա այն թերությունները, որոնք կարող են հիմք հանդիսանալ մերժման համար, ինչպես նաև նախատեսել մեխանիզմ, որի միջոցով կողմը կարող է դրանք շտկել և կրկին ներկայացնել դիմումը: Այս մեխանիզմը մի կողմից կապահովի ընթացակարգի արդյունավետությունը, մյուս կողմից՝ կպաշտպանի կողմերի դատական պաշտպանության իրավունքը: Նշվածի արդյունքում, եթե, այնուամենայնիվ, կողմը չվերացնի նման թերությունները դատարանը կարող է մերժել դիմումի բավարարումը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

««Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) փաթեթով առաջարկվում են Հայաստանի Հանրապետությունում հաշտարարության ինստիտուտի բարեփոխմանն ուղղված իրավակարգավորումներ:

2.1. ««Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ (այսուհետ սույն ենթավերնագրում նաև՝ Օրենքի նախագիծ)

Օրենքի նախագծով առաջարկվել են հետևյալ իրավակարգավորումները.

2.1.1. Համահաշտարարության եզրույթի և իրականացման առանձնահատկությունների նախատեսում:

2.1.2. Արդարադատության նախարարության կողմից դիմումների և պահանջագրերի ստացման դեպքում հաշտարար նշանակելիս նաև մշտապես գործող հաշտարարական հաստատություն նշանակելու հնարավորության նախատեսում:

2.1.3. Մշտապես գործող հաշտարարական հաստատության կողմից իր հաշտարարական կանոններում հաշտարարության սկզբի վերաբերյալ այլ կարգավորումներ սահմանելու հնարավորություն:

2.1.4. Մշտապես գործող հաշտարարական հաստատության կողմից սահմանված ծախսերը հաշտարարության հետ կապված ծախսերի ցանկում ներառելու հնարավորություն:

2.1.5. Ամբողջությամբ կամ մասնակի առցանց հաշտարարություն իրականացնելու դեպքում հաշտության համաձայնությունը էլեկտրոնային եղանակով ստորագրելու հնարավորության նախատեսում:

2.2. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ

Նշված նախագծով սահմանված իրավակարգավորումները մեծապես պայմանավորված են «Հաշտարարության մասին» օրենքում կատարվող փոփոխություններով: Մասնավորապես, փոփոխվել է նաև արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու դիմումի ներկայացման ժամկետը և սահմանվել մեկ տարի, ինչպես նաև նախատեսվել է հնարավորություն, ըստ որի օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք իրավունք ունեն դիմել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ Հայաստանի Հանրապետության արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու պահանջով: Մինևույն ժամանակ, Նախագծով առաջարկվում է արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու պահանջով գործերի դեպքում թույլատրել դատարաններին մատնանշել այն հիմքերը, որոնց համաձայն դիմումը կարող է մերժվել և հնարավորություն տալ կողմերի շտկել դիմումում առկա թերությունները:

3. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է բարեփոխել հաշտարարության ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում, նախատեսել օրենսդրական խթաններ ուղղված հաշտարարության՝ որպես վեճերի այլընտրանքային միջոցի զարգացմանը, ինչը կհանգեցնի նաև դատարանների ծանրաբեռնվածության թեթևացմանը:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի կողմից:

5. «Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ».

Նախագծերի ընդունումը բխում է 2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 1133-Լ Կառավարության որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից (Հավելված 1-ով հաստատված «Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում» վերնագրված ռազմավարական նպատակի շրջանակներում), ինչպես նաև Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշումից: Մասնավորապես, նշված որոշման Հավելված 1-ում Արդարադատության նախարարության թիվ 8-րդ նպատակի («Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում») միջոցառումների թվում է «Հաշտարարության մասին» օրենքի վերանայմանն ուղղված օրենսդրական փաթեթի մշակումը: